ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ
2020-2021 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2020-2021 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 87 մարդ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 56 մարդ /որից 25-ը կին/,

Պրոֆեսոր - 3

Գիտությունների դոկտոր - 3

Դոցենտ - 5, որից 3-ը կին:

Գիտությունների թեկնածու -24, որից 13-ը կին:

4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 17, որից 13-ը կին:

Ուսումնաօժանդակ կազմը - 1, որից 1-ը կին:

Գիտա-բժշկական ուսումնական կենտրոն-15, որից 11-ը կին:

Տնտեսական մասը-6, որից 3-ը կին:

2020-2021 ուստարվա ընթացքում կնքվել է 71 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 20-ը /պայմանագրի լուծարմամբ, որից 5-ը հիմնական աշխատող, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 57:

2020-2021 ուստարվա համար, 50 դասախոս ընդգրկվել են պահուստային դասախոսների ցուցակում: Նախորդ՝ 2019-2020 ուստարվա դասախոսների պահուստային ցուցակից 2020-2021 ուստարվա պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկվել են Ռաֆայել Մանվելյանը, որպես «Վիրաբուժական առարկաների» ամբիոնի վարիչ, դասախոս և Գայանե Ղամբարյանը, որպես «Ստոմատոլոգիայի» ամբիոնի դասախոս:

- 2020-2021 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.

- պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր,
- ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր,
- ԳԲՈՒԿ-ի աշխատակիցներ՝ 26 աշխատանքային օր,
- վարչական , ուսումնաօժանդակ և տնտեսական մասին՝ 24 աշխատանքային օր:

➢ Հաստիքացուցակը կազմվել է 08.01.2020թ-ին և հաստատվել ռեկտորատի նիստում:

➢ Համալսարանում աշխատում են տարիքային 8 թոշակառուներ:

Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:

➢ Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

2020-2021 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 441ը:

➢ Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:

Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:

➢ Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:

➢ Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 271 տեղեկանք /աշխատողներին՝ 17, ուսանողներին՝ 254/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

➢ 2020-2021 ուստարվա մայիսի 27-ից հունիսի 14-ը ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Գյոզալյանի կողմից ԱԲՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար անց է կացվել 1 ամսյա վերապատրաստում «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և

որակի ապահովման համատեքստը» թեմայով, որում ներգրավված է եղել Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, 064 մասնագիտական խորհրդի քարտուղար, ՌԴ հոգեբանության միջազգային գիտական ակադեմիայի թղթակից անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ Վարդանյանը:

Վերապատրաստման ավարտին 70 մասնակցի տրվել է հավաստագրեր: